ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№__4924-Ա___ « 17 » դեկտեմբերի 2024թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «ԾԻԾԵՌՆԱԿ-23» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 15.01.2024 թվականին կնքված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-24/17 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված՝ Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը /ներառյալ օրացույցային գրաֆիկը/:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրի հ.2 հավելվածի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետ է համարվում շինարարական աշխատանքների և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիրը (ֆինանսական միջոցների տրամադրման համաձայնագրերը) ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 365-րդ օրացույցային օրը ներառյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետով, միակողմանի մասնակի լուծել է կնքված Պայմանագիրը՝ համարելով այն լուծված՝ 5.725.835 /հինգ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր երեսունհինգ/ ՀՀ դրամ գումարի չափով:

Պայմանագրի մասնակի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի դեկտեմբերի 6-ին և պայմանագիրը սույն թվականի դեկտեմբերի 9-ի դրությամբ համարվում է մասնակի լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1.«ԾԻԾԵՌՆԱԿ-23» ՍՊ ընկերությունը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ